

ու վեզիրներուն մէջ սկսած էր պառակտումը: Շալիք և Տարխաճ կը պայքարէին վեզիրութեան համար. Շավէր դիմեց Հալէպի Աթապէկ Նուրէտտինի որ օգնէ իր յաջողութեան՝ իր տիրապետութիւնը Եգիպտոսի վրայ դիւրացնելու փոխարէն:

ԺԱ. գարուն, առաջաւոր Ասիոյ մէջ ծագում առած էին թուրք իշխանութիւններ՝ որոնց պետերը կը կոչուէին Աքապիկ. ասոնք գերիներ էին, ազատագրուած կամ ոչ, որոնց կը յանձնուէր իշխանազուններու խնամածութիւնը կամ կրթութիւնը: Աթապէկ տիպոսով ասոնք իրենց ծառայութեանց փոխարէն առանձնաշնորհում կ'ստանային շատ անգամ վարել զօրաց հրամանատարութիւնը, զաւտներու կառավարչութիւնը, ու երբեմն ալ անոնց կը յանձնուէր ամենէն փշոտ և փափուկ խնդիրներու կարգադրութիւնը. իրենց կարգին ասոնք ալ իշխանազուններու համակրանաց ու երախտագիտութեան վրայ կ'աւելցուի՝ կը կազմէին անկախ իշխանութիւններ:

Թուրք մը Ագ-Սոնքոր («սպիտակ բազէ») սոյն տիպոսով, այս գարուն, Հալէպի և Սիւրիոյ շատ մը քաղաքներուն կառավարիչ ընտրուած էր և Ապպասեան Խալիֆայէն Քալիլ-ks-sorju (իշխանութեան բաժնեկից) տիպոսը ստացած էր: Այս տիպոսը, միեւնոյն ժամանակ իր իշխանութիւնը ժառանգեց իր որդին Ապու-Սայիտ Զէնկի, որ ստացաւ Էմատ-էտ-տին պատուակալ անունը և ասիկա հայրն էր Աթապէկ Նուրէտտին Զէնկիի, որուն բուն անունն էր Մահմուտ, և ան երբեմն ալ կը կոչուէր Իպն-էլ-Քասիմ, համաձայն այն տիպոսին՝ զոր ստացած էին իր հայրը և մեծ հայրը: Նուրէտտին յաջորդեց իր հօրը 1146ին. ինքը բարեպաշտ իսլամ մ'էր. ան նուիրուեցաւ սուրբ պատերազմի. ֆրանկներէն զբաւեց Մարաշը, Պանիասը և ուրիշ բերդեր. որթոտօքս իսլամ էր և ուզեց Հալէպէն անհետացնել շիիդ վարդապետութիւնները, զոր Ծաթիմեանք հոն հաստատած էին: Հիւանդանոցներու և Գուրանի ուսուցիչներուն վագֆներ հիմնարկեց, և հրամաններ արձակեց Պետեվիներուն որ ուխտագնացութեան արգելք չըլլան. շինել տուաւ Մետինէի պարիսպը. ճանապարհներուն վրայ հաստատեց ֆերիսուսարաններ և կամուրջներ: Ան զբաւեց շատ մը քաղաքներ և Խաչակրաց վրայ մեծ յաղթանակներ տարաւ, և այս կերպով մեծ ազդեցութիւն ունեցաւ իր սահմաններուն մէջ: 1151ին Սալահէտտին Եուսուֆ թողլով իր